

Նպատակ

Երեխա ունեցող ընտանիքներին մարզային բնակավայրերում բնակելի անշարժ գույք ձեռքբերելու նպատակով դրամական աջակցության տրամադրում

Դրամական աջակցության չափ

- 1) դիմողի տարիքը գերազանցում է 30 տարին, ապա

դրամական աջակցության գումարը կազմում է ձեռք բերվող բնակելի անշարժ գույքի արժեքի 5%, բայց ոչ ավել, քան 1 մլն դրամ

3-րդ և հաջորդ երեխայի դեպքում դրամական աջակցության չափն ավելացվում է ևս 5%-ով, բայց ոչ ավել, քան յուրաքանչյուր երեխայի հաշվով 500 000 դրամ, ընդ որում, ընդհանուր աջակցության չափը չի կարող գերազանցել 2 մլն դրամը:

- 2) դիմողի տարիքը չի գերազանցում է 30 տարին, ապա

դրամական աջակցության գումարը կազմում է ձեռք բերվող բնակելի անշարժ գույքի արժեքի 35%, բայց ոչ ավել, քան 2.6 մլն դրամ

3-րդ և հաջորդ երեխայի դեպքում դրամական աջակցության չափն ավելացվում է ևս 5%-ով, բայց ոչ ավել, քան յուրաքանչյուր երեխայի հաշվով 500 000 դրամ, ընդ որում, ընդհանուր աջակցության չափը չի կարող գերազանցել 2.6 մլն դրամը:

Հիմնական պայմաններ

- 1) դիմողն ունի առնվազն 2 անչափահաս երեխա,
- 2) անշարժ գույքը ձեռք է բերվում 01.07.2020թ. հետո,
- 3) անշարժ գույքի գնահատված և շուկայական արժեքը չի գերազանցում 30 մլն դրամը, իսկ 3-րդ և հաջորդ երեխայի դեպքում նշված սահմանաչափն ավելացվում է ևս 5 մլն դրամով, դիմողի կողմից կատարվող կանխավճարի նվազագույն չափը երկրորդային շուկայի դեպքում կազմում է 10%, իսկ առաջնային շուկայի դեպքում՝ 7.5%: